

ՀԱՅ ՄԻՏՔԸ ՇԵՒԼԻԻ «ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՊՐՈՄԵՔՆՈՍ»-Ի ՄԱՍԻՆ

Դ. Հ. ՀԱՄԱՐՔՆՈՒՄՅԱՆ

Անգլիացի քանաստեղծ Պ. Բ. Օելլիի նկատմամբ հայ գրական ու հասարակական միտքը ցուցաբերել է ավելի քան մեկդարյա հետաքրքրություն, որը բացատրվում է ոչ միայն քանաստեղծի ստեղծագործության համամարդկային բնույթով, այլև հայ մտքի ազատասիրական կողմնորոշմամբ այդ և անցյալ ու հետագա թուր ժամանակներում: Հայ գրականագիտական միտքը առանձնապես կարևորել է Օելլիի «Ազատագրված Պրոմեթեոս» դրաման, որը թարգմանվել է արևմտահայերեն և արևելահայերեն, արժանացել հետաքրքիր վերլուծությունների ու գնահատությունների: Պրոմեթեոսյան առասպելի հայկական հիշատակումներն ու արձագանքները հայ քննադատական մտքի պատմության մեջ առանձնանում են որպես ազգային-ազատագրական, հեղափոխական շարժումների պատկերման արտահայտություններ: Դրանք ներկայանում են ինչպես հին հունական առասպելի էպիկեյսյան մշակման, այնպես էլ Օելլիի ռոմանտիկական մեկնաբանության տարբերակներով: Առասպելի մշակման էպիկեյսյան տարբերակը Պրոմեթեոսի հաղթանակը մեկնում է Յուպիտերի հետ հաշտության ուղիով, մինչդեռ շելլիյան մեկնաբանությունը Ազատության և հռոմեոսյան միջև հաշտության եզրեր չի տեսնում, և Պրոմեթեոսի հաղթանակը ձեռք է բերվում միայն պայքարի շնորհիվ:

Այս վերջին տարբերակը հայ ժողովրդի պատմական մտածողությանն ավելի հարագատ է, ուստի գուր չէր հայ երախտավոր Արշակ Չուպանյանը այնպես հետամուտ Օելլիի «Ազատագրված Պրոմեթեոսի» հայերեն թարգմանությանն այնժամ, երբ ինքն արդեն հայերեն էր թարգմանել էպիկեյսի «Պրոմեթեոս շղթայված»-ը: «Անահիտ»-ի էջերը սիրով տրամադրվեցին Հակոբ Անտոնյանի հանգամանալից վերլուծությանը՝ «Օելլիի «Պրոմեթեոս Արձակվածը» հոդվածին, և ապա «Անահիտի» չորս տարիների համարներում պարբերաբար հրատարակվեց «Պրոմեթեոս Արձակված» դրաման Հ. Անտոնյանի թարգմանությամբ (1930—1933 թթ.):

1892 թ. «Մուրճ»-ի «Արտասահմանյան քրոնիկ» բաժնում («Բանաստեղծ Օելլիի ծննդյան հարյուրամյակը») արդեն հիշատակվում է Օելլիի «Ազատագրված Պրոմեթեոս» դրաման, սակայն որևէ հանգամանալից վերլուծություն կամ համառոտ գնահատական չի տրվում: Իսկ ահա 1905 թվականին «Բազմավեպ»-ում հրատարակված «Անգլիացի մատենագիրներ» շարքում ներկայացվում է Օելլիի կենսագրականը, համառոտ, բայց դիպուկ գնահատականներ են տրվում քանաստեղծի մի շարք ստեղծագործություններին, այդ թվում և «Ազատագրված Պրոմեթեոս դրամային. «...քանաստեղծություն գերազանց թռիչքով՝ մարդկային ազատության գաղափարին վրա...»¹: Այնուամենայնիվ, հայ գրաքննադատական միտքը դեռևս իր խոսքը չէր ասել Օելլիի գլուխգործոցի վերաբերյալ:

Ինչո՞ւ այդքան ուշ (19-րդ դարի 80-ական թթ.) հայ միտքն անդրադարձավ Օելլիին, և ապա՝ ինչո՞ւ հատկապես 80—90-ական թթ.:

Հարություն Ալամդարյանը և Մեսրոպ Թադիադյանը ծանոթ են եղել Օելլիի ստեղծագործություններին. «Բայց հենց սկզբից ասեմք, որ Ալամդարյանը չհաղթահարեց ռոմանտիզմը. թեև նա զգաց դեկաբրիստների ռոմանտիկական պոեզիայի շունչը, ապրեց հայրենի և Օելլիի ռոմանտիզմի հովերով, այնուհանդերձ, իր ներքին հնարավորություններով չկարողացավ հասնել ռոմանտիզմի բարձունքներին և կանգնեց այն սահմանագծում, ուր սենտիմենտալիզմը թռիչք պիտի կատարեր դեպի ռոմանտիզմը»², և «Թերևս մեր առաջին գրագետն էր նա (Մեսրոպ Թադիադյանը—Դ. Հ.), որ ընկալեց ռոմանտիզմը, կարդաց սրա

¹ Հ. Ա. Հովսեփյան, Անգլիայի մատենագիրներ (Օելլի), «Բազմավեպ», № 11, էջ 516:

² Ս. Ն. Սարինյան, Հայկական ռոմանտիզմ, Եր, 1966, էջ 99:

ականավոր ներկայացուցիչներին (Բայրոն, Օելլի, Սկոտտ, Լոնգֆելլո), յուրացրեց գրական այդ դպրոցի գաղափարական ու գեղագիտական մի շարք սկզբունքներ»³:

Գրականագետ Լ. Մանվելյանը նույնիսկ որոշ նմանություն՝ է նկատել Օելլիի «Սիրո փիլիսոփայություն» և Հ. Ալամդարյանի «Դավ երևակայության» քանաստեղծությունների միջև, չնայած այն համարել է պատահական երևույթ⁴: Հետագայում Արամ Իշնիկյանն ավելացրել է. «Անհավանական չէ սակայն, որ Ալամդարյանը ծանոթ լիներ Օելլիի ստեղծագործությանը, ինչպես ծանոթ է եղել Բայրոնին»⁵:

Այսքանով հանդերձ, մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ չկա որևէ ակնհայտ փաստ, որևէ նշում, որտեղ Հ. Ալամդարյանը կամ Մ. Թադիսյանը իրենց կարծիքը հայտնեին Օելլիի ու նրա ստեղծագործությունների մասին, կամ նրանից թարգմանություն, փոխադրություն կատարած լիճեին: Իսկ ինչ վերաբերում է Օելլիի պոեզիային ծանոթ լինելուն կամ նրա ազդեցության կնիքը կրելուն, ապա դա կարելի է պարզապես զգալ այդ քանաստեղծների պոեզիան մոտիկից ճանաչելով և նրանց գրական ու գեղագիտական հայացքները պարզելով: Մեզ հետաքրքրող տվյալ դեպքում Օելլիի ստեղծագործությանը տրված գնահատականն է, նրա երկերի վերլուծությունն ու արժեքավորումը հայ մտքի կողմից, մի բան, որ չի արվել մինչև 18-րդ դարի 90-ական թվականները: Պատճառները թերևս մի քանիսն են.

1. 18-րդ դարի 90-ական թվականներին անգլիական ողմանտիզմը անկում էր ապրում (նկատի ունենք այդ ուղղության գլխավոր ներկայացուցիչների՝ Բայրոնի, Օելլիի, Քիթսի վախճանը), մինչդեռ հայկական ողմանտիզմը դեռ նոր էր ծնունդ առնում և մինչև իր անկումը՝ 18-րդ դարի 80-ական թթ., կլասիցիզմի հետ հավասարապես տիրում էր հայ գրական ընթացքին: Եթե ողմանտիկ Բայրոնը դարի կեսին արդեն ծանոթ էր հայ ընթերցողին, իսկ Օելլին՝ ոչ, ապա դա մեծ մասամբ բացատրվում է Բայրոնի ցուցաբերած հետաքրքրությամբ դեպի հայ ժողովուրդը, նրա գրականությունը, լեզուն ու պատմությունը, ինչպես նաև Բայրոնի կլասիցիստական հայացքներով, որոնք հայ կլասիցիզմի խոշոր ներկայացուցիչն Ղ. Ալիշանին, որի ողմանտիկական հուվերը նույնպես ակնհայտ էին, ոգևորեցին՝ թարգմանելու անգլիացու երկերը:

Կլասիցիզմի հակառակորդ Օելլին, հասկանալի է, չէր կարող հրապուրել հայ կլասիցիստներին:

2. Այլ հարց է, թե ինչու Օելլին չերևաց հայ գրական ու հասարակական կյանքում նույնիսկ այն ժամանակ, երբ Պատկանյանի, Արոյանի, Բաֆոնի և Ծերենցի ողմանտիկական մտահայեցությունը աստիճանաբար հայկական ողմանտիզմին հողատիրական բովանդակություն էր ներարկում: Պատճառն այն է, որ հայկական ողմանտիզմն իր ընդգծված «ազգային երազանքի ու հայրենական թախծի» մոտիվներով զատորոշվում էր անգլիականից (ընդհանուր առմամբ նաև եվրոպականից), և «իր իդեալները կառուցում էր լուսավորական գաղափարների վրա»⁶: Մինչդեռ ողմանտիկ Օելլին իր իդեալները կառուցում էր ոչ թե մեխանիստական լուսավորական մատերիալիզմի (ինչպես էր ստեղծագործական կյանքի վաղ, մի կարճ շրջանում), այլ իդեալիստական դիալեկտիկայի և պատմականության հիման վրա:

Այսպիսով, մինչև 18-րդ դարի 80—90-ական թթ. Օելլին չերևաց հայ գրական ու հասարակական մտքի ոլորտներում ձևն այն պատճառով, որ հայկական ողմանտիզմի պատմափիլիսոփայական հեռանկեսը հակադիր էր Օելլիի ողմանտիկական հայեցությանը:

Հայ միտքը սկսեց հետաքրքրվել Օելլիով հատկապես 18-րդ դարի 80—90-ական թթ., քանի որ քանաստեղծի ստեղծագործության ազատասիրական ոգին ու քննարկական հագեցվածությունը, քաղաքակաճ պաթոսը նրան հարագատ էին դարձնում հայ մտավորականներին, որոնք օտար գրականության մեջ որոնում էին իրենց հուզող հարցերի արձագանքները, այլազան թեմաների շարքում փնտրում իրենց գրական ու գեղագիտական, գաղափարական պահանջները բավարարող թեմաներ: Օելլիի գրչի տակ առանձնահատուկ հնչեղություն էին ցուցնել հետևյալ թեմաները. ազգային-ազատագրական⁷, հեղափոխական շարժումներ, սոցիալական ու ընտանեկան անարդարություններ, փիլիսոփայական-դավանաբանական վիճաբանություններ, քննարկական ապրումներ և այլն: Օելլիի կենարար լավատեսությունը հատկապես անցյալ դարի 90-ական թվականներին էր անհրաժեշտ հայ ժողովրդին, որը հե-

³ Նույն տեղում, էջ 106: Այդ մասին տե՛ս նաև Էլ. Գևորգյան, Հարություն Ալամդարյան, Եր., 1977, էջ 155:

⁴ Լ. Մանվելյան, Ռուսահայ գրականության պատմություն, Ալեքսանդրապոլ, 1909, պր. Ա, էջ 29—30:

⁵ Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Եր., 1962, էջ 809:

⁶ Ս. Սարիճյան, Հայկական ողմանտիզմ, Եր., 1966, էջ 83:

ծում էր քարքարոսության ճիրաններում, և որի համար ազգային պահպանման խնդիրը առաջնային էր դարձել: Ազգային-ազատագրական, հեղափոխական շարժումը ազգապահպանման միջոց էր առաջարկվում, իսկ Օելլիի «Ազատագրված Պրոմեթեոս»-ը համայն մարդկության ազատագրության լավագույն խորհրդանշան էր:

«Ազատագրված Պրոմեթեոս»-ի մասին հիացմունքի խոսքեր է գրել «Մասիս»-ի գրախոս դոկտոր Հովսեփ Տեր-Ստեփանյանը, որը Օելլիին ակնարկների շարք է նվիրել. «Առաջի՛քը («Ազատագրված Պրոմեթեոս»-ը—Դ. Հ.) համարված է արդի անգլիական բանաստեղծության ամենեն ուժեղ և վեհ արտադրությունը, առանց որևէ տարակույսի: Անհավասարելի քերթված մը հիացումով, ոճով և արվեստով»:

Դարասկզբին Օելլիին նվիրված ակնարկների շարքում առանձնանում է Վահան Թաշճյանի ակնարկը: Այն աչքի է ընկնում Օելլիի քնարի դիպուկ բնորոշմամբ. «Ան քնարը եղավ աշնանային եղերերգուներու թախծության, ու մրրիկներու գերակա ամեհությանց, ու կատաղանքը, ժպիտը, արցունքը, պայքարող բազուկը և հույսերու մարգարեն»:

Վահան Թաշճյանը բարձր է գնահատել հատկապես «Ազատագրված Պրոմեթեոս» դրաման, որը համարել է Օելլիի «հեղափոխական դավաճանքը» ներկայացնող երկ: Ըստ Թաշճյանի Օելլիի փիլիսոփայությունն ընդգրկում է ֆրանսիական հեղափոխության դավաճանքը, որը մարդկության երջանկության խաթարումը կապում է եկեղեցու, կրոնի և կառավարությունների հետ:

Վ. Թաշճյանը փորձել է բացահայտել Պրոմեթեոսի կերպարի էությունը, ցույց տալ նրա առանձնահատկությունը՝ համեմատելով նրան ծառուտի և Կայենի հետ. «Պրոմեթեոս մարդկությունը կը ներկայացնէ,— ազնիվ ու արդար մարդկություն մը, որ շղթայված է Արամազդի ձեռամբ, և Արամազդ մարդկային հաստատություններու մարմնացումն է: .. Գյոթեի հերոսը զարգացած ու ինքնաստեղծ է, Պայրընհը՝ ստոիկ ու անքնական, Օելլիինը՝ համբերող է իր ստատպանքին մեջ... Անոր ոգեմամ գեղեցկությունը և մաքուր փիլիսոփայությունը միայն Միլտոնի «Դրախտ Վերստացյալ» ունի»:

«Ազատագրված Պրոմեթեոս»-ը հայ գրական ու հասարակական կյանքում մի առանձին ուշադրության է արժանացել մեր դարի երրորդ տասնամյակում, երբ հայ կյանքում կատարված պատմական ու քաղաքական փոփոխությունները նոր տեսանկյունից էին դիտել տալիս քոյր իրողությունները, այդ թվում և գրական երևույթները:

Համակողմանի ընդգրկումով է ներկայանում ընդհանրապես Օելլիի ստեղծագործության փիլիսոփայական-քաղաքական քնարը, մասնավորապես՝ «Ազատագրված Պրոմեթեոսը»: Օելլիի հեղափոխական հավատամքը պատկերող այս երկը, որ ռոմանտիկ-իդեալիստական շարադրանք է, ոգեշնչեց Զապել Եսայանին՝ Մարտելիում 1928 թ. հրատարակած իր ճամփորդական նոթերը վերնագրելու «Պրոմեթեոս Ազատագրված»: Ինչպիստ հայուհին իր սրբզան պարտքն է համարել այցելել մեծ հոկտեմբերի հայրենիքը և սեփական աչքերով տեսնել այն հսկայական փոփոխությունները, որ կատարվել էին այդ երկրում, որի մի փոքրիկ մասում վերածնվում էր նաև իր հայրենիքը՝ Խորհրդային Հայաստանը: Իր ճամփորդության ընթացքում Զ. Եսայանը ականատես է եղել բազում նոր իրադարձությունների, հիացել և ոգևորվել է նորին որդեգրված մարտիկների տոկունությամբ, հաստատակամությամբ: Գրողը մի առանձին ոգեշնչումով է այցելել Հեղափոխության թանգարան, ուր ներկայացված հեղափոխական գործիչների (հատկապես կանանց) պատկերները տպավորիչ ազդեցություն են թողել նրա վրա: Նա ստեղծել է ռեալիստական պատկերների մի ամբողջ շարք, ուր քնարական շնչով պատկերավոր համեմատություն է կատարել, ոգևորչել «Պրոմեթեոս շղթայագերծին».

«Ռուս մեծ ժողովուրդը, Պրոմեթեոս շղթայված, կողերը պատառոտուն գիշատիչ և արյունաբորու անգղերե, որ այսուամենայնիվ երբեք չէ հրածարներ ազատագրվել, որ միշտ կոծեր է իր շղթաները, որ ունեցեր է հանկարծակի ցնցումներ, օրհասական գայարումներ, անհա այսօր հաջողել է վերջապես խզելու իր գերությունը... Պրոմեթեոս շղթայագերծ և ազատագրված, անհկա պատրաստ է արդեն իր անշեջ հուրը փոխանցելու ամբողջ մարդկության...»¹⁰:

Ահա այսպես, խորհրդանշան-պատկերներով է շղթայված ողջ ստեղծագործությունը, որը շնչով հիշեցնում է ռոմանտիկ Օելլիի գլուխվործոցը, սակայն ի տարբերություն նրա

⁷ Հ. Տեր-Ստեփանյան, Արդի անգլիական գրականության հիմնադիրները, «Մասիս», 1906, № 2, էջ 28:

⁸ Վ. Թաշճյան, Անգլիական գրականություն (Օելլի), «Կոչնակ», 1911, № 51, էջ 1227:

⁹ Նույն տեղում, № 52, էջ 1252—1253:

¹⁰ Զ. Եսայան, Պրոմեթեոս Ազատագրված (ճամփորդական նոթեր), Մարտել, 1928, էջ 81—82:

իղեալիստական հայեցության, Չ. Չասյանի երկը ռեալիստական է՝ քննյթով ու թուանդակությամբ:

Պրոմեթեոսյան առասպելը հետաքրքրել է: Ան Արշակ Չոպանյանին, որը ոչ միայն հայ գրականության պրոպագանդողն էր օտար ափերում, այլև օտար գրականության պրոպագանդողը հայ կյանքում: Ա. Չոպանյանը ֆրանսերեն բառացի թարգմանությունն արձակ տողերով հայերեն թարգմանեց Էսքիլեսի «Պրոմեթեոս շղթայված»-ը, որի մասին հիացմունքով գրեց. «Մի «Պրոմեթեոս շղթայվածը» այն հրաշալի քերթվածներն մին է, որ թառամիլ չեն գիտեր, որ մարդկային ճակատագրի հավիտենական ու էական հարցերուն վրա հիմնված՝ միշտ կը մնան այժմեական ու միշտ կը հուզեն ընթերցողը և կը վրդովեն ու կը հմայեն անոր միտքը»¹¹:

Բարի կամքի աստվածները նահատակվում ու դարձյալ հարություն են առնում, ներանց ազատության հույժը միշտ վառ է. այս գաղափարը եղել ու պահպանվել է տարբեր ժամանակներում, տարբեր ժողովուրդների մոտ: Չոպանյանի համոզմամբ այդ գաղափարն արտահայտողներն են մեր Գեղեցիկ Արամ, Արտավազդն ու Մհերը, Օեյլիի Ադոնիսը, բայց «այդ մեծ ու հավիտենական գաղափարին ամենախորին, ամենագեղեցիկ ու համեմատաբար անխառն մարմնացում մըն է Պրոմեթեոսի հեղին հղացումը. հատակ, լուսավոր, արձանագործական...»¹²:

Էսքիլեսի եռաբանության երրորդ մասը նվիրված է եղել Պրոմեթեոսի ազատագրմանը, բայց քանի որ երկրորդ և երրորդ մասերն անհետացել են, ուստի, ըստ Չոպանյանի, Օեյլին ցանկացել է այդ կորուստը դարձանել և գրել է «Պրոմեթեոս Ազատագրված»-ը, «ուր ժԹ դարու այդ հույակապ իմաստասեր քնարերգակն ինքզինքը հեղին հիմնավորց պոետին հանձնարին արժանավոր ժառանգորդը, անոր ոգուն հարազատ շարունակողն ու ընդլայնողը ցույց կուտա»¹³:

Չնայած այս բարձր գնահատությանը, Չոպանյանն աչքաթող է արել մի կարևոր հանգամանք, որի մասին խոսում է հենց ինքը՝ Օեյլին, «Ազատագրված Պրոմեթեոս»-ի համար գրած առաջաբանում: Օեյլին պարզաբանել է, որ ինքը մտադիր չի եղել վերստեղծել Էսքիլեսի կորսված դրաման, որ իրեն չի գոհացնում Էսքիլեսի հերոսի հաշտությունը Յուպիտերի հետ, և իր հերոսը կհաղթի բունկալին միայն անհաշտ պայքարում: Անշուշտ, Արշ. Չոպանյանը մեծ դեր է կատարել «Անահիտ»-ի էջերում օտարալեզու գրականությունը ընթերցողին ներկայացնելու գործում, ինչպես որ մեծ էր նրա ցանկությունը՝ տեսնել Օեյլիի «հերաշակերտի» թարգմանությունը հայերեն: Հակոբ Անտոնյանը թարգմանեց «Ազատագրված Պրոմեթեոս»-ը արևմտահայերեն և այն նվիրեց Աբրահամ Տեր-Հակոբյանին ու Արշակ Չոպանյանին, որոնց հորդորով նա լծվել էր այդ աշխատանքին, և որը, նրա խոստովանությամբ, «ճիզի հետ այնքան հրճվանք պատճառեց»:

Մինչ թարգմանությունը ներկայացնելը Հ. Անտոնյանը «Անահիտ»-ում հանդես է գալիս մի ուշագրավ հողվածով, որտեղ առանձին սիրով վեր է լուծում Օեյլիի դրաման, հաճախ իր խոսքը դարձնում այնքան դիպուկ ու արտահայտիչ, որ այն ստանում է ասացվածքի հնչեղություն: Ահա դրանցից մի քանիսը. «Օեյլիի բանաստեղծական հանձնարին լիակատար չափը «Պրոմեթեոս Արձակված»-ի մեջ է, որ կը գտնենք», «Տեսլապաշտ մըն էր Օեյլի, մարդկային ընկերությունը բարեկարգելու բուն տեսչով, և բացարձակ անիշխանական մը ըլլալու չափ՝ կատարյալ ազատության սիրահար», և կամ՝ «Օեյլիի խոշորագույն սերը մարդկությունն էր, և «Պրոմեթեոս Արձակվածը», էսպես, տառապակոծ մարդկության հույսի և փրկության տրամբերությունն էր», «Դիցավեպ մըն է «Պրոմեթեոս Արձակված»-ը», «Ազատաստենչ մարդասիրությունն է, որ անոր մեջ մեզի կը ներկայանա արվեստի բարձրագույն տարագով, բանաստեղծներու ամենեն բանաստեղծականին կախարդական լեզվով»¹⁴:

Եվ մի կարևոր հանգամանք. Հ. Անտոնյանը ընդգծում է Օեյլիի և Էսքիլեսի կերտած Պրոմեթեոսների տարբերությունը և նկատում, որ Օեյլիի նպատակը Էսքիլեսի կորսված «Պրոմեթեոս Արձակված»-ը վերստեղծելը չէր, այլ այն նորոպի, ըստ իր անձնական համոզմունքների պատկերացման ներկայացնելը: Այդ առթիվ նա գրում է. «Ան (Օեյլի—Դ. Հ.) չէ ուզած որ Պրոմեթեոս, վեհանձն, մարդասեր ու անձնագոհ Տիտանը, զիջանի սակարկությամբ մը իր ազատությունը ձեռք բերել, այլ ուզած է, որ հակառակ ամեն տառապան-

¹¹ Ա. Չոպանյան, Էսքիլեսի «Պրոմեթեոս շղթայված»-ը, «Անահիտ», 1929, № 2, էջ 1:

¹² Նույն տեղում, էջ 2:

¹³ Նույն տեղում, էջ 3:

¹⁴ Հ. Անտոնյան, Օեյլիի «Պրոմեթեոս Արձակված»-ը, «Անահիտ», 1930, № 1, էջ 24—

քի՝ ան մնա ըմբոստ ու անհողողող, և իր փրկությունը գա ոչ թե իր կողմն եղած զիջումով մը, այլ դեպքերու անխուսափելի բերումով»¹⁵:

Մի շարք արծանիքների շարքում Հ. Անտոնյանը որոշ «սթություններ» է տեսնում «լույսով ու գույնով կայծկլտուն» այս երկում, որոնք միևնույնն է, չեն արժեզրկում այն: Գլխավորը ոգին է, երկի հարուցած զգացմունքը, որը կերպավորվում է բանաստեղծի անչափելի մարդասիրությամբ և ամրակալվում բարու հաղթանակի հավատով: Հեղինակը անդրադառնում է նաև երկի թարգմանության որոշ առանձնահատկությունների, որոնք առընչվում են նրա տաղաչափական ու ոճական նրբություններին: «Իր տողերը,— գրում է հողվածագիրը,— իմաստի պարունակությամբ երբեմն այնքան նոսր են ու աննյութական, որ երաժշտություն թարգմանելու անկարելի գործին կը վերածվի շատ սնգամ աշխատությունը:

Բաղդատաբար շատ ավելի դյուրին է թարգմանել դասական հեղինակ մը, որուն խորհուրդներն ու ոճը հստակ են, քան պարիկներու լեզվով խոսող քնարերգակ մը: Տողերուն երաժշտականությունը թարգմանությամբ տալ, խնդրե դուրս է անշուշտ, և ափսոս, որ այդպես է, որովհետև գործին մեծագույն հրապույրներն մեկը անոր նվազային գեղեցկությունն է»¹⁶:

«Ազատագրված Պրոմեթեոս»-ը և ընդհանրապես Օեւլիի մյուս արժեքավոր երկերը՝ «Իվալմի ապստամբությունը», «Ալսատոր»-ը, «Չենչի»-ն արժանացել են էլիզ Պետրոսյանի ուսումնասիրությանը, որը մի ընդարձակ հողվածով ներկայացրել է դրանք հայ ընթերցողին: Հեղինակի ուշադրությունից չեն վրիպել նաև Օեւլիի քաղաքական, փիլիսոփայական ու քնարական բանաստեղծությունները, որոնք բնութագրել է հետևյալ կերպ. «... նա իր ամենալիրիկական բանաստեղծությունները իմաստավորել է փիլիսոփայական խորհրդածություններով»¹⁷:

Անշուշտ, Օեւլիի ստեղծագործության հեղափոխական շունչը, հակաբնակալական ոգին է. Պետրոսյանն ամենից առաջ նկատում է «Ազատագրված Պրոմեթեոս»-ում, իսկ Պրոմեթեոսին համարում «գործունեության անսահման հնարավորություններ» ունեցող տիպ: Հետաքրքիր է Պրոմեթեոսի համեմատությունը Բայրոնի Մանֆրեդի և Չայլդ Հարոլդի հետ. «Պրոմեթեոսը խորապես տարբերվում է Չայլդ Հարոլդից և դեպի մահը գնացող Մանֆրեդից: Նա ունի ապրելու, գործելու, կատուցելու, պայքարելու և հաղթանակելու ձգտումներ»¹⁸: Է. Պետրոսյանը չի նպատակադրել վերլուծել Օեւլիի «Ազատագրված Պրոմեթեոս»-ը, այլ փորձել է ընդհանուր գծերով ներկայացնել Օեւլիի ստեղծագործությունը, ուստի դրամային նվիրված տողերը թեպետ բնորոշող, բայց սակավ են:

«Ազատագրված Պրոմեթեոս»-ում արտահայտված համամարդկային խնդիրները հուզել է հուզում են բոլոր քաղաքակիրթ ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին, ուստի պատահական չէր դրամայի երկրորդ թարգմանությունը 1988 թվականին, երբ արևմտահայերեն թարգմանությունից գրեթե չորս տասնամյակ էր անցել: Դրամայում արտահայտված խնդիրներն առնչվում են ապագա հասարակության կառուցվածքին, նրա զարգացման և առաջընթացի շարժիչներին և համամարդկային ձգտումին՝ ազատությանը:

Հետաքրքիր է, որ Օեւլիի ուստպիստական հայացքների ամբողջությունը, ըստ որի առաջ է ընթանում «ապագա» հասարակությունը, հանգում է սոսկ ուստպիստ մտածողների հայացքներին և չի ծխում նրանց առաջարքած դրույթները որևէ կետում.

**Ազնվություն, Մշմարտություն, Իմաստություն,
Համբերություն,— ահա ուժերն այն գերագույն,
Որ սանձում են Ավետուժի ուժը վայրի:
Բայց եթե մայր—Հավերժության ձեռքը դողա,
Եվ ակամա արձակի օձն երկրի վրա,
Որ նրա շուրջ երկարությամբն իր գալարվի,
Ապա միայն դրանցով է հնարավոր
Վերականգնել քառսի մեջ աշխարհը նոր...»¹⁹**

Պարզունակ թվացող այս հավաստումները Օեւլիի դրաման դարձնում են անգնահատելի արժեքավոր, քանի որ ներկայացնում են բարոյական չափանիշներ, որոնցով ամուր է ցանկացած հասարակություն: Անշուշտ, մատերիալիզմ-իդեալիզմ աշխարհայացքային քննների տեսանկյունով դիտելիս «Նոր աշխարհի» կերտման վերոհիշյալ դրույթը իդեալիստական է,

¹⁵ Նույն տեղում, էջ 25:

¹⁶ Նույն տեղում, էջ 28:

¹⁷ Է. Պետրոսյան, Օեւլիի ստեղծագործությունը, Երևանի պետ. համալսարանի գիտական աշխատություններ, 1939, հ. 10, էջ 168:

¹⁸ Նույն տեղում, էջ 162:

¹⁹ Պ. Բ. Օեւլի, Ազատագրված Պրոմեթեոս, Եր., 1965, էջ 143—144:

քանի որ «Ազնվության, Շշմարտության, Իմաստության և Համբերության գերագույն ուժերը»՝ իդեաներն են պայմանավորում «վերականգնվող աշխարհի»՝ մատերիայի գոյությունը: Ի սկզբանե հայ ժողովրդի պատմական ճակատագիրը տնօրինում էին Արա Գեղեցիկը, Արտավազդն ու Մհերը, որոնց ապրեցնող լավատեսությունը, վերակենդանանալու ընդունակությունը ընդհանուր եզրեր ունեն Օելլիի Պրոմեթեոսի հետ: «Ազատագրված Պրոմեթեոսը» արևելահայերեն է թարգմանել Մկրտիչ Սողկյանը, որը գրքի նախաքանում գրել է. «Իր խոշորագույն ստեղծագործության մեջ՝ «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայում (1820 թ.) Օելլին ներկայացնում է ապագա հասարակությունը՝ առանց «ցեղերի և ազգերի» խտրության, առանց դասակարգային ճնշման»²⁰:

Թարգմանության որակի խնդիրը առանձին ուսումնասիրության նյութ է, իսկ մեզ հետաքրքրողը թարգմանության փաստն է, որն, ի դեպ, թուրիմացորեն ծանոթագրված է իբրև հայերեն առաջին հրատարակություն, անտեսված է Հ. Անտոնյանի արևմտահայերեն թարգմանությունը:

Օելլիի Պրոմեթեոսին անդրադարձել է նաև գրականագետ Վարդան Փարթամյանը: Օելլիին նկիրված հալ գրականագիտական հոդվածների, ակնարկների, ուսումնասիրությունների յուրատեսակ ամփոփումը ներկայացնող այս աշխատանքը, որ վերնագրված է «Նոր օրերի Պրոմեթևսը», վերջին տասնամյակներում հայ շելլիագիտության մեջ երևացած հանգամանալի ուսումնասիրություններից մեկն է²¹:

Օելլին իր կերտած հերոսների, հպտկապես Պրոմեթեոսի մման մշտապես կմնա նոր ժամանակների ուշադրության կենտրոնում:

Д. А. АМБАРЦУМЯН—Армянская критика об «Освобожденном Прометее Шелли.— В статье обобщаются оценки шедевра английского романтического поэта Перси Бисш Шелли. «Освобожденный Прометей» армянской литературной и общественной мыслью, которые имеют почти столетнюю историю. Армянские отклики и упоминания древней легенды о свободолюбивом Прометее выделяются в истории армянской критической мысли как выражения национально-освободительных, революционных настроений. Произведение Шелли расценивалось в контексте надежды и веры армянского народа в освобождение от чужеземного ига.

²⁰ Նույն տեղում, էջ 7:

²¹ Վ. Փարթամյան, Նոր օրերի Պրոմեթևսը, Հայ-անգլիական գրական առնչությունները, Եր., 1975, էջ 814: